Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 11

2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղաք Երևան

Մասնակցում էին՝

1. Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
2. Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության փորձագետ
3. Անդրանիկ Ալեքսանյան	Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատ
4. Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
5. Էդիկ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
6. Լուսինե Մնացականյան	Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում
7. Էդուարդ Բաղալյան	Քաղաքացի-հարկատու-բիզնես իրավապաշտպան կազմակերպություն
8. Ռուբեն Օսիպյան	«ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ
9. Վահագն Համբարձումյան	«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ
10. Լուսինե Սարգսյան	Երևանում Բրիտանական Դեսպանատուն
11. Հովսեփ Պատվականյան	Հայաստանի ներդրումային խորհուրդ
12. Դավիթ Աղաջանյան	Հայաստանի ներդրումային խորհուրդ
13. Ռուբեն Սարուխանյան	Հայաստանի ներդրումային խորհուրդ

14. Հայկ Մալխասյան Հայաստանի ներդրումային խորհուրդ

15. Հասմիկ Սողոմոնյան Հայաստանի ներդրումային խորհուրդ

16. Հռիփսիմե Հովհաննիսյան ՊՄԵ բաժնի պետի ԺՊ

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

ՀԱՐՑ 1. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման միջոցառումը հաստատելու մասին» N 355-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Ռաֆայել Գևորգյանի ներկայացմամբ ենթախորհրդի անդամներին տեղեկացվեց, որ ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված է արտադրողականության ապահովել համախառն գործոնային տարեկան առնվազն 5% աճ՝ 5 տարիների ընթացքում ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 55%-ի:

Այդ նպատակին հասնելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ ներառյալ նպատակային վարկերի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով: Չնայած գործող ծրագրերի արդյունավետությանը՝ դրանք բավարար չեն նախատեսված արդյունքին հասնելու համար:

Հաշվի առնելով Հայաստանում գործող ՓՄՁ-ների ցածր արտադրողականությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով, 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշման Հավելված N1-ով նախատեսված են «2.1 Ռազմավարական և առաջնահերթ ոլորտներում տեխնոլոգիական արդիականացում և բիզնես պրոցեսների օպտիմալացում», «2.2 Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում տեղական ընկերություններում» գործողությունները՝ նիստի օրակարգում ընդգրկվել է 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման միջոցառումը հաստատելու մասին» N 355-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու հարցը:

Մասնավորապես, Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար՝ Հովսեփ Պատվականյանը ներկայացրեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ մշակած նախագիծը, որով առաջարկվում են փոխհատուցման մոդելներ՝ ընդհուպ մինչև կապիտալ ծախսերի 50% փոխհատուցում այն տնտեսվարողների համար, որոնք ՀՀ գիտահետազոտական ինստիտուտներից, ԲՈՒՀ-երից որևէ մեկի հետ համատեղ վերջինիս տարածքում կստեղծեն և կգործարկեն միջազգային ճանաչված սերտիֆիկացիայով լաբորատորիաներ: Նշված լաբորատորիաների միջոցով ծառայություններ կմատուցվեն թե՛ տվյալ տնտեսվարողներին, թե այլ անձանց: Նախագծի երկրորդ հավելվածով

առաջարկվում է փոխհատուցում տրամադրել այն տնտեսվարողներին, որոնք իրենց աշխատանքներում կներգրավեն բարձր որակավորում ունեցող մասնագետների (ԲՈՈՒՄ), ովքեր վերջին 12 ամսվա ընթացքում չեն բնակվել Հայաստանում: Նախագծով ԲՈՈՒՄ սահմանումը առաջարկվում է տալ, որպես մասնագետ, ով կամ ավարտել է QS համաշխարհային համալսարանների վարկանիշի առաջատար 400 համալսարաններից որևէ մեկը և/կամ ունի առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ միջազգային ինդեքսներում տեղ գտած որևէ ընկերությունում: Փոխհատուցման չափը կարող է հասնել ընդհուպ մինչև աշխատավարձի 70%-ը, բայց ոչ ավել, քան 2,000,000 դրամ, եթե ԲՈՈՒՄ-ը ունի դոկտորական գիտական աստիճան և հիմնական աշխատանքին զուգընթաց դասավանդում է նաև ՀՀ ԲՈՒՀ-երից որևէ մեկում: Հարցի շուրջ ծավալված քննարկման ժամանակ խորհրդի անդամներ Փայլակ Թադևոսյանի, Էդուարդ Բադալյանի, ինչպես նաև Լուսինե Մնացականյանի կողմից, մտքերի փոխանակման կարգով, ներկայացվեցին դիտարկումներ և հարցեր ծրագրի, ինչպես նաև տնտեսական աջակցության ծրագրերի և դրանց ուղղությունների կանխորոշման հետ կապված կարծիքները:

Նիստի ընթացքում քննարկվեցին նաև օրակարգից դուրս մի շարք հարցեր, որոնց հետ կապված խորհրդի անդամների մտահոգությունների հետ կապված պարզաբանումներ և դիտարկումներ ներկայացրեց Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը: ՓՄՁ զարգացման խորհրդի անդամները նաև կարծիքներ փոխանակեցին խորհրդի օրակարգային հարցերի քննարկումները քվեարկությամբ իրականացնելու առաջարկություն վերաբերյալ: Համաձայն առաջարկության, նշվածը կարևոր է խորհրդի հրապարակային դիրքորոշման ամրագրման տեսանկյունից: Նշված հարցերի համատեքստում բարձրաձայնվեցին մի շարք խնդիրներ, որոնք առնչվում էին վճարահաշվարկային համակարգերի կիրառմամբ գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող միջնորդավճարների դրույքաչափերի, զեղչի վերաբերյալ ՀՕ օրենսգիրք ներմուծված նոր կարգավորման հետ կապված հարցերին:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Վ.ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124